

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը
ուղերձ կը յղէ

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի անդամ եւ Սեւրի Խաղաղութեան Դաշնագիրը
ստորագրած երկիրներու կառավարութեանց

Հայաստանի Հանրապետութեան ներքին իրավիճակի եւ Արցախեան հարցի խաղաղ
կարգաւորման խնդիրներու կապակցութեամբ, որտեղ մասնաւորապէս ըստւած է.

«Հայաստանի Հանրապետութեան ներքին իրավիճակի կտրուկ սրման խորքային եւ հիմնական
պատճառներէն մէկը Արցախեան խնդրի կարգաւորման մէկ նոր տարբերակը շրջանառութեան
մէջ դնելու հարցն է, որոնց կարգին՝ տարածքներու յանձնումի պայմանը եւ հայ հանրութեան
համար չափազանց զգայուն այլ նմանատիպ խնդիրներու առկայութիւնը: Ակնյայտ է, որ այդ
ամէնը չի նպաստեր թէ ճշգրիտ զինուած դիմակայութեան անարիւն հանգուցալուծմանը եւ թէ
Արցախեան խնդրի վերջնական ու արդարացի կարգաւորմանը:

Հետեւաբար, այս պարագային, մենք կը ցանկանք Ձեր ուշադրութեան հրաւիրել այն
իրողութիւնը, որ Արցախի, Հայաստանի Հանրապետութեան, Մերձաւոր Արեւելքի, Արեւմտեան
Հայաստանի հայութեան հիմնական խնդիրները կարելի է լուծել բացառապէս իրաւական գետնի
վրայ՝ նկատի ունենալով այն բոլոր որոշումները, որոնք կայացեր են 1920-ական թթ. հայութեան
ու Հայաստանի կապակցութեամբ, սակայն մինչեւ օրս իրականացուած չեն:

Ասոնց կարգին են՝ Սեւրի Խաղաղութեան Դաշնագրի 92-րդ յօդուածի պահանջը Հայաստանի եւ
Ազրպէյճանի Հանրապետութեան միջեւ սահմանազատման խնդիրը, Սեւրի Խաղաղութեան
Դաշնագրի յօդուածները Հայաստանի վերաբերեալ, ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուստրոյ Ուիլսոնի
կայացուցած Իրաւարար վճիռը Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանազատման
կապակցութեամբ:

Կը խնդրենք հաշուի առնել, որ Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, Մերձաւոր Արեւելքի,
Արեւմտեան Հայաստանի հայութիւնը, ինչպէս նաեւ համայն հայութիւնը, իրաւունք ունի
արժանապատիւ կեանքի, զարգացման հեռանկարի եւ ապագայի յոյսի:

Կը խնդրենք նկատի առնել, որ նոր ժամանակաշրջանին՝ 1988-էն ի վեր, Արցախի, Հայաստանի
Հանրապետութեան, Մերձաւոր Արեւելքի հայութիւնը դարձեր է թշնամական ծրագիրներու ու
գործողութիւններու թիրախ, կարելի է թուել՝ թշնամական յարձակումներ, բռնագաղթ,
շրջափակում: Աւելին, տարածքային յարձակումներու ու ոչնչացման թիրախ դարձեր են ոչ
միայն հայ մարդիկ ու քաղաքացիներ, թաղամասեր ու բնակավայրեր, գիւղեր ու քաղաքներ,
այլեւ Հայոց քաղաքակրթական արժէքներ՝ եկեղեցիներ, դպրոցներ, պատմամշակութային ու
կրթական շինութիւններ ու կառոյցներ:

Այո, հայութիւնը եւ Հայաստանը շատ տառապեր են, բայց այդ չի նշանակեր, թէ այդպէս կարելի
է անվերջ շարունակուի: Ժամանակը շատոնց հասած է տարածաշրջանի իրավիճակը
արմատապէս փոխել հանուն խաղաղ գոյակցութեան ու բնականոն զարգացման:

Ձեզ ուղղուած այս ուղերձի իմաստը վերոյիշեալ կէտերու առնչութեամբ Ձեր դրական,
կառուցողական եւ գործունիայ մասնակցութիւնը այս հարցին նկատմամբ քննարկել ու
իրականացնելն է»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան
Լրատուական ծառայութիւն

25.07.2016 թ.